ՎԱՀԱՆ ՄԻՆԱԽՈՐԵԱՆ

ԱՐՀԱԻԻՐՔԻ ՕՐԵՐ

VI

ՎԵՐԱԴԱՐՁԸ

Անցել էր երեւի մէկ կամ երկու ժամ, երբ բակում ոտնաձայն լսուեց։ Ելանք ու մէկ կողմ քաշուեցինք։ Դուռը բացին։ Նոյն փոլիսն էր, Իբրահիմը, որ հրամայեց մեզ դուրս գալ։ Դրեթէ միաժամանակ ախոռը մտաւ մի վտիտ ու այլանդակ թուրք։ Զարմանքն ու շփոթութիւնը համակեց ինձ։ դաճաճն էր՝ կոյսերի սայլապանը։ Իսկոյն յիշեցի լուսաբացին պատահած դէպքը եւ մինչ ուզում էի պարզել ինձ համար, թէ ինչ ճակատագրական կապ կայ մեր եւ այս թշուառականի մէջ, որ նորից ցցուում էր մեր ճամբու վրայ՝ երբ փոլիսը սայլի մօտից յետ դարձաւ մի տրցակ բոլորովին նոր պարան ձեռքին եւ հրամայեց մեզ չոքել։ Նա սկսեց մեր թեւերը կապկպել։ Իր զսպուած ատելութեան եւ դայրոյթի առարկան յատկապէս ես էի։ Ծունկը դրած ուսիս՝ նա կատաղութեամբ քաշում, թոթուում, պրկում էր հանդոյցը, քթի տակ հայհոյանքներ տեղալով։ Վերջապէս նա աւարտեց իր գործը ու, մէկ կողմ քաշուելով, կծու հեգնանքով ասաց։

— Հիմա ջանդ ազատիր տեսնեմ, թէ ինչպէ՞ս պէտք է յաջողիս, կոմիտէ բաշի՛։

Հասկացայ, որ ներշնչուած է...

Անասուած կերպով էր կապել եւ այնքան իրարու մօտ, որ հազիւ կարողացանք ոտքի ելնել։ Դաճաճը ախոռից դուրս էր բերել ձին եւ լծում էր երկանիւ սայլը։ Երբ աւարտեց եւ սայլը դարձրեց դէպի բակի դուռը, փոլիսը գոչեց։

— Հայտէ՛, ելէք սայլը։

Իրարու հրմշտկելով մօտեցանք, բայց մի կատարեալ տառապանք եղաւ վեր բարձրանալը։ Սայլը սովորական սայլերից բարձր էր։ երկուսով միասին, եւ այն էլ յետ պրկուած թեւերով, չէինք կա-

բող վեր ելնել։ Միւս կողմից հնարաւորութիւն չկար որ նախ մեզանից մէկն ու մէկը անցնէր։ Վերջապէս մօտեցաւ բակի մէջ անտարբեր կանգնած մելամաղձոտ ժանդարմը, որի օգնութեամբ ես ներս սողացի, քաշելով Գարեգինին։ Այդ նոյն վայրկեանին, խուլ ճըրճռթոցով ծոցիս մէջ մի բան փշրուեց։ Հասկացայ, որ ակնոցներս ջարդուեցին։ Ժանդարմը մեզ մօտ դրաւ Գարեգինի բակում մնացած կապոցը եւ տեղ բռնեց դաճաճի մօտ։ Սայլը շարժելուն պէս պարզ եղաւ, որ քով քովի նստել չենք կարող։ Թէ իմ եւ թէ Գարեգինի թեւերը ցնցումներից, կարծես թէ, կտրտւում էին։ Ես քիչ առաջ անցայ, իսկ Գարեգինը, դառնալով դէպի յետ, յենուեց ինձ։

Թէ որ ուղութեամբ էին մեզ տանում, դժուար էր հասկանալ։ Ամեն անգամ, երբ վեր էի առնում գլուխս, աչքս սաստիկ կծկւում էր։ Բայց շուտով մեր դիմաց երեւաց խարխլած արգիլարանը։ Քիչ անց նա մնաց մեր յետեւը եւ մենք մտանք դաշտը ճեղքող մի ճամբայ։ Առջեւում, դէպի վեր երեւում էր մեր քարանսարան։ Հասկացայ, որ բռնել ենք աղջամուղջին մեկնած սայլերի ճամբան։ Շուտով մօտեցանք քարանսարայի պատին, որի տակ լուսաբացին շարած էինք բոլորս։ Գլխաբաց, ոտաբոբիկ մի թուրք, բթամատերը գոտիի մէջ խոթած, նայում էր մեզ։ Քիչ վերը, ճամբու ծայրին, մի գամբռ ծուլօրէն դիտում էր ձին։ Դունչն առաջ նետելով, նա յանկարծ բացեց բերանը, բայց հաջոցի ձայն չելաւ։

Ելանք խճուղին։ Թւաց, թէ մեզ տանում են միացնելու գաղթին, բայց յանկարծ թեքեցինք դէպի աջ։ Դեռ ախոռի մէջ, որքան երկարում էր մեր կեանքը, այնքան սկսում էի համոզուել, որ առաջին առիթով մեզ սպանելու միտք չունեն։ Այժմ, երբ բռնեցինք Կաւդայի ճամբան, հասկացայ, որ խնդիրը միայն պարզ սպանութեան մէջ չէ։ Վերյիշեցի Ստկիի վերջին խօսքերը, փոլիսի «կոմիտէ բաշին», բայց իրադարձութիւններից որեւէ եզրակացութիւն հանելը հնարաւոր չեղաւ։

Դաճաճը, թեւերը վեր – վար անելով եւ յետ ու առաջ ընկնելով, դղրդացին փախցրեց սայլը։ Կարծես, թէ երեխայ է եւ փայտի ձի է քշում։ Ու յիշեցի Բելեդիէից Զախալի անցած ճանապարհը, «սայլասպանները», գլխացաւս... Բարեբախտաբար ցաւի ոչ մի նշան չկար· գլուխս միայն դմբում էր պարապ տակառի պէս։

Բաւական ճամբայ էինք անցել, երբ Գարեգինը յետ նայեց ու չչնջաց, թէ Ստկին, ժանդարմների պետը եւ փոլիսը ձիերով գալիս են մեր յետեւից։ Հասան մեզ ու, թանձր փոշի բարձրացնելով, առաջ անցան։ Քիչ վերը ժանդարմների պետն ու դոկթոր Սկին ձիերը

քառասմբակ քշեցին։ Կարծես, թէ մրցման փորձեր էին անում։ Գաճաճը հարայհրոցով ձին նստեց ու փախցրեց։ Ըստ երեւոյթին, ուզում էր գոնէ փոլիսին հասնել, որ բաւական յետ էր մնացել երկուսից։ Բայց ձին գնաց, գնա՛ց եւ վեր ցցած գլուխը թափահարելով, գաճաճի հարուածների տակ ակամայ մէկ – երկու ոստիւններ կատարեց ու գոհացաւ միայն արագ քայլերով։ Շուտով երեք ձիաւորները անհետացան մեր եւ նրանց մէջ տարածուած թանձր փոշու յետեւում։

Ճանապարհը նորից ամայացաւ։ Կարծես թէ այդ լայն, փոշոտ խճուղին հաստատուած էր միայն հայերը տեղահանելու համար։ Թէեւ մի օր առաջ երբ անցնում էի այդ խճուղիով, աշխատում էի մտքիս մէջ նշաններ անել նրա վրա, բայց այժմ ոչինչ չէի կարողանում վերյիշել։ Ձախ կողմից, բլրակների վրա, խորդուբորդութիւնների մէջ մերթ ընդ մերթ պատահում էին վայրի ծառեր, որոնց վրա թառած խոշոր, սեւ թռչունները, սայլի դղրդոցից անհանգիստ, ճախրում ու ապա իջնում էին բլուրների թիկունքում։ Աջ կողմից տարածւում էին անմշակ դաշտեր։ Ձին ընթացքը դանդաղել էր։ Գաճաճը, ըստ երեւոյթին, ձանձրացել էր իր գործից. ձեռքը դրած այտին, երգում էր այդ օրերին յատկապէս տարածուած «Մէմօ» սիրային երգը։ «Ամա՛ն Մէմօ», «դա՛տլը Մէմօ» — խռպոտ ու այլանդակ ճիչերը բախում էին ուղեղս...

Ճամբու պտոյտներից մէկի ծայրին ուշադրութիւնս գրաւեց դէպի մեզ շարժւող մի զանգւած։ Տարածւած փոշին խանգարում էր լաւ տեսնել ու թւաց, թէ ձիերի երամ է։ Գաճաճը երգը ընդհատեց ու ցցւեց նստած տեղը՝ բաղէի պէս։ Հայեր էին, գիւղացիներ, բայց թէ որ շրջանից, չգիտեմ։ Դեռ մեզ չհասած՝ զանգւածը ճեղքւեց։ Սուարադոյն մասը կանայք եւ երեխաներ էին։ Վերջինները զղզւած ու գրեթէ մերկ էին։ Կանայք, սակաւ հանդիպող տղամարդիկ, ցնցոտիների մէջ էին։ Բեռ, անասուն, սայլ չտեսայ։ Բոլորը, մէկ մարդու պէս, գետինը թնդացնելով գնում էին հա՛ գնում, կարծես թէ օր առաջ «տեղ» հասնելու անխախտ որոշումից դրդւած։ Լաւ նայելու դէպքում՝ ամէն մարդ կարող էր նկատել, որ նրանք, թէեւ գնում են մէկ արագութեամբ, բայց տարբեր ձեւերով են քայլում. մէկը գլուխը առջեւ երկնցած, միւսը ուսի վրայ մէկ կողմը թեքած, ոմանք գլխիկոր, ոմանք խրոխտ, գմբէթաձեւ դիրքի մէջ, ոմանք կոյրի նըման սեւեռուն, ոմանք էլ ցաք ու ցրիւ, անհաստատ։ Ընդհանուր էր միայն մէկ բան՝ գնում են հա՛ գնո՛ւմ։ Փոքրերից բացի, ոչ ոք, կարծես թէ, մեր սայլը չէր նկատում. մեզ պիշ – պիշ նայում էին զանգ-

ւածի յետեւից քայլող ձիաւոր երկու ոստիկաններ, մտրակների ծայրերը ծնկերին յենած։

Արեւն արդէն կախւել էր դիմացի բլուրների վրա, երբ մենք մօտեցանք ինչ որ աւերակների։ Անհաշիւ քանակութեամբ սեւ ու խոշոր թռչուններ ելնում էին աւերակների թիկունքի բլրագագաթներից, առաջին պատահած ծառի վրա նստում, ապա, կամարաձեւ շրջան անելով, նորից իջնում էին բլուրների ստորոտը։ Կարծես թէ նրանք էլ էին դաղթում։ Ու ծանր էր օդը եւ այնքա՜ն հեղձուցիչ, որ գլուխս դառնում էր։ Երեւի բաւական ժամանակ էր անցել, երբ հասանք մի կիսաքանդ վայր։ Փլած խրճիթները, մարագները եւ ճամբու վրա ընկած խոշոր քարերը ազօտ կերպով վերականգնում էին մտքիս մէջ մի օր առաջ Կաւդայից անցած ճանապարհը։ Պէտք է, որ շատ հեռու չը լինէինք քաղաքից։ Կիսաքանդ, բլրաձեւ մի շէնքից քիչ վար սայլը կանգ առաւ։ Վերը, դէպի ձախ, մի քանի քայլի վրա շարքով կանգնած էին երեք թամբած ձիեր։ Ուրեմն, Ստեփն, ժանդարմների պետը, փոլիսը դեռ այստեղ էին։ Բայց ոչ ոքի չտեսայ։ Մելամաղձոտ ժանդարմը ձեռքով նշան արաւ, որ իջնենք։ Գրեթէ միաժամանակ դաճաճը վազեց դէպի թամբած ձիերը։ Ժանդարմը մեզ առաջնորդեց ճամբու վրա ընկած մի կիսաքանդ շինութիւն։ Քանդւած պահե՞ստ էր, ախո՞ռ, ձմերային մարա՞գ, գո՞մ թէ ինչ՝ չգիտեմ։ Այստեղ ու այնտեղ անխնամ կուտակւած իէն փոշիացած աղբեր։ Շէնքի մուտքը եւ յետեւի պատը գրեթէ կիսով չափ փլած ու գետնի հետ հաւասարւած էին։

Ժանդարմը տարաւ մեզ այդ երկար շինութեան մինչեւ կենտրոնը։ Գարեգինը, կարծես թէ, ինքնամոռացութեան մէջ էր ու այնքան դանդաղ էր քայլում, որ ստիպւած էի լինում քաշել։ Զարաշուք տրպաւորութիւն էր թողնում այդ շէնքը։ Ժանդարմը պատի տակ կանգ առաւ ու նշան արաւ, որ նստենք։ Աւելի քան մռայլ էր։ Այդ վայրկեանին, զարմանալի է, ոչ մի մանրամասնութիւն չէր վրիպում աչքիցս։ Գետնին յենած հրացանի կոթի ծայրը մէկ բթաչափ ելնում ու նստում էր։ Թեւս պրկւած վիճակում ցնցւեց։ Գարեգինը ինձ նայեց, կարծես թէ ուզեց ձայն հանել։ Բայց նոյն վայրկեանին ժանդարմը դարձաւ, յամրաքայլ յետ գնաց ու դուրս ելաւ շէնքից։ Պատի տակ կկզած՝ Գարեգինը անընդհատ ցցւում էր առաջ ու վեր – վար նայում։ Յանկարծ նա շնչահեղձ շշնջաց.

— Փախի՛նք...

Բոլորովին այլայլւած նայում էր աչքիս մէջ.

— Կզգա՞մ, որ հիմա մեզ հոս պիտի սպանեն...

Նրա անհանդստութիւնը ամբողջապէս համկեց նաեւ ինձ ու ոչինչ չկարողացայ ասել: Բայց անմիջապէս երեւի ինքն էլ հասկացաւ, որ փախչելու ոչ տեղ կայ եւ ոչ էլ հնարաւորութիւն. գլուխը կախեց ու կարծես թէ հանդարտուեց: Անցաւ մէկ – երկու վայրկեան եւ յանկարծ նա ցնցուեց.

— Ա՛... ըդէն...

Իսկոյն նկատեցի մուտքից դէպի մեզ քայլող մէկին եւ բոթեցի Գարեգինին, որ լռի: Մտքերս, ինչ որ հրաշքով կարգի ընկած վիճակում, դատում, ճշդում էին արագ: Երեւի բնազդն էր ինձ առաջնորդում: Զերքեզի հագուստով մի բարձրահասակ մարդ, դանդաղ ու համաչափ քայլերով, գալիս էր դէպի մեզ: Նա ձեռքերը դարսել էր յետեւում: Դաշոյնը քայլի հետ հորիզոնաձեւ ճօճւում էր: Ատրճանակի պատեանի բաց ծածկը, զարնուած թռչնի թեւի պէս, թարթում էր: Գարեգինը ուզեց վեր կենալ, բայց ներքին մի թելադրութեամբ պահեցի: Իսկ երբ մարդը բոլորովին մօտեցաւ ու կանգ առաւ, ոտքի ելանք: Եկւորը անխօս նայում էր մերթ ինձ, մերթ Գարեգինին: Մի աներեւակայելի համբ տեսարան էր այդ, որ չա՞տ երկար թւաց ինձ: Բայց ահա մարդը գլուխը կախեց եւ դաշոյնը, դաստակից բռնելով, ծայրը ոտքերի մէջ առաւ: Դէմքը կնճռած նայում էր մեր ոտքերին: Ամենայն յստակութեամբ զգում էի, որ ոչ մի ձայն չպէտք է հանել: Յանկարծ նա գլուխը վեր առաւ ու թւաց, որ ուզում է բան ասել: Եւ ես, որ մինչեւ այդ Գարեգինից աւելի ինքնագիտակ վիճակի մէջ էի, սկսում էի տեղի տալ՝ մարդու վրաս քարացած ու ծանրացած հայեացքի առջեւ: Բայց ահա նա նստեց, ապա վար առաւ գլուխը, նոյն դանդաղ ու համաչափ քայլերով գնաց դէպի վար եւ չէնքի միւս ծայրից դուրս գալով, անհետացաւ...

Թուլացել էինք ու գրեթէ վայր ընկանք պատի տակ:

Երեւի անցել էր մօտ մէկ ժամ, երբ յայտնուեց ժանդարմը եւ առաճնորդեց մեզ սայլի մօտ: Թամբած ձիերը չկային: Գաճաճը այլեւս ոչ մի աճապարանք չէր արտայայտում: Զին էլ կամք չունէր գնալու: Ժանդարմը արձանացած նայում էր մէկ կէտի: Մտքերս դեռ դառնում էին չերքեզի հագուստով մարդու շուրջը, երբ աջ կողմից, աւերակների մէջ, նկատեցի մի խումբ կացինաւորներ, որոնք նման էին տներ այցելող փայտահատների. նրանք նստած վիճում էին. մեզ տեսնելով մէկէնիմէկ սմքեցին: Աւերակների ծայրից երկարում էր նոյն լայն, փոշոտ ճանապարհը, որով անցել էինք մի օր առաջ, բոլորի հետ միասին: Ու մտքերս, չերքեզից անցնելով փայտահատներին եւ նրանցից տարագիրներին, նորից սկսում էին չփոթուել...

Բաւական ժամանակ էր անցել, երբ մեր դիմաց, ճամբու բովանդակ երկարութեան վրա, նշմարեցի մարդկանց ահագին բազմութիւն: Նեղ շերտով, ճամբու ձախ եզրի ուղղութեամբ, բաւական մեծ տարածութեան վրա նստած էին անհաշիւ մարդիկ: Գիւղացի տարազներ էին: Ցանկարծ յիշեցի Զախալլիից դուրս մեզ պատահած Զարշամբայի շրջանի գիւղացիներին... Եթէ նրանք են, փոխուած են: Ու ոչ հորթ, ոչ կով, ոչ եզ, ոչ բեռներ չկան այլեւս: Եւ ինչո՞ւ այնտեղ են նստել ու ոչ թէ քիչ վերը՝ աւերակներում, որ ոտքով հազիւ մէկ ժամւայ ճամբայ է...Սարսուռը ցնցում է ինձ... Մեծ մասամբ կանայք, երեխաներ, բայց կան նաև բաւական թւով տղամարդիկ: Առաջինները, տեսնելով մեզ, կայծակնահար նայում են, բայց դեղջկուհիներից ոմանք ամաչելու ձեւով երեսները դարձնում, կամ ծածկում են ձեռքերով: Մէջ ընդ մէջ պատահող տղամարդիկ, երբ նրանց հաւասարւում էինք, գլուխները կախում էին: «Ձեն տեսել», «չգիտեն» — այսպէս էր նրանց ընթացքը: Այս շարքի ծայրին, բաւական մեծ ընդմիջման վրա, կար տղամարդկանց մի ստւար խումբ: Դեռ երիտասարդ մարդիկ էին: Բոլորի թեւերը պարանով կապկպւած միացւած էին: Երբ հաւասարւեցինք, սրանց մէջ իրարանցում, խլրտոց, շարժումներ եղան. մէկը մինչեւ իսկ, ըստ երեւոյթին, մոռանալով, որ կապւած է, փորձեց վեր կենալ ու մօտենալ մեզ, բայց ընկաւ:

Աւելի վար սկսւում էր մի երկրորդ շարք. սրանք բացառապէս երիտասարդ կանայք, աղջիկներ ու փոքրիկներ էին: Դժւար է նկարագրել այս տեսարանը: Մեռելաթաղի հաւաքւած կանանց նման էին: Ոմանք շարունակում էին լալ, ոմանք, մեզ տեսնելով, լացը ընդհատում, նայում էին. ոմանք էլ բռնում, յետ էին քաշում փոքրերին: Արդեօք վերը կապւած տղամարդիկ սրանց ամուսիննե՞րն էին, թէ առաջին շարքից դատւած երիտասարդներ, չգիտեմ: Մի գեղջկուհի ինչ որ բան է ասում երեք – չորս տարեկան աղջնակին, որ գրեթէ մերկ, բզքւած շապիկով կանգնած, ոստի պէս դողալով, նայում էր մեզ ու շուրթերը դժդոհութեամբ ուռցնում: Առջեւս ընկած Գարեգինի կապոցից դժւարութեամբ դուրս քաշեցի մի կտոր հաց՝ աղջնակին նետելու համար, բայց սայլը անցաւ եւ ես ուշացայ: Քիչ վարը մի կին, իր տղեկի մօտ նստած տեղից կիսով չափ վեր ելած ու դունատ դէմքի վրա սեւ, մեծ աչքերը լայն չռած, բերանաբաց նայում էր: Ես հացը նետեցի փոքրիկին, որից նա սարսափելի վախեցաւ, ճչաց ու, մօրը գրկելով, պահւեց: Ու թէեւ դահճաը ձին յանկարծ փախցրեց, բայց տեսայ, պա՞րզ տեսայ, թէ ինչպէս կինը հա-

ցի վրայ խոյացաւ։ Նա էր, թէ նա չէր... Այն փոքրիկ տղեկի դեռատի մայրը, որին պատահեցինք Կարաղաղի սարի տակ, չգիտեմ։ Ու դէմքեր, անհաշի՛ւ դէմքեր... մա՛նչ, կի՛ն, մե՛ծ, փո՛քր... կիսատ – պռատ դէմքե՛ր... քի՛թ, դլո՛ւխ, ակա՛նջ... Ու մի աչք սեւեռաբիբ, կարծես թէ, դլոորուում էր սայլի հետ զուգահեռ...

Սթափուեցի։ Բայց փոխնիփոխ այրուում եւ մրսում էի։ Դիմացը մայր մտնող արեւի թեք ճառագայթները հորիզոնում կապմել էին վարդագոյն շերտեր, որոնք վերէն – վար չիթ – չիթ դեղնելով, տըժգունում էին ու մոխրանալով չքանում։ Աջից եւ ձախից այժմ պատահում էին արտեր, բանջարանոցներ։ Մի գիւղացի դաշտից աճապարանքով դառնում էր։ Ուսին դրած բահի վրա ուշ մնացած մի ճառագայթ էր խաղում...

***

Մթնեց։ Սայլը թէեւ դղրդում էր, բայց, կարծես թէ, չէր գնում։ Գաճաճը անվերջ մտրակում էր ձին ու մերթ ընդ մերթ նրա հետ վէճի մէջ մտնում։ Մթութեան մէջ, դէմս նստած ժանդարմի ցից սուինից զատ՝ ուրիշ ոչինչ չեմ տեսնում։ Ջարդուել էի խսպառ, ոտքերս երկարելու տեղ չկար, իսկ ծալած վիճակում յարատեւ մնալը դժուարանում էր։ Նստած տեղս, կարծես թէ, քնում, արթնանում էի։ Ճամբու վրա ծուարած տարագիրները այժմ ինձ պատկերանում էին աւերակների մէջ։ Ու, որպէս թէ, մայրը շտկում է աղջնակի վեր բարձրացած շապիկը եւ ասում.

— «Աղօթի՛ր»։

Եւ աղջնակը, դժգոհ դէմքով, ցցում է շրթունքներն ու ասում.

— «Մա՛յր, չէ՞ որ ես աղօթել չիտեմ»։

— «Ըսէ՛, աղուորս, Հա՞յր մեր...

— «Հա՞յր մեր։

— «Որ յերկինս ես...

— «Որ յերկինս ես։

— «Սուրբ ըլլայ Քո անունը...

— «Սուրբ ըլլայ...

— «Ըսէ՛, Քո անո՞ւնը...

— «Ըսէ՛, Քո անո՞ւնը...

Ցանկարծ դլուխս դարձաւ ու նստած տեղս կքեցի...

— Վահա՞ն...

Բոլորովին մոռացել էի Գարեգինին։ Ու մտքերս բուռն թափով

digitised by

նրանից անցան կնոջը, Արմենակին, Պարունակին, Տիգրանին, բոլորին։ Ո՞ւր են, արդեօք, հիմա։

— «Ամասիայի կիրճի այն կողմը» ... Անհնարին է։

— «Ամասիայի կիրճի այս կողմը»... Թերեւս։

— «Ամասիայի կիրճի մէջ»... Զգիտե՛մ։

Վեր վար թառած տների միջից մերթ ընդ մերթ առկայծում էին լոյսեր։ Քաղաքի վարի մասերում, մի մռայլ չէնքի առաջ, սայլը կանգ առաւ։ Մի ծուռ լապտեր լուսաւորում էր մայթը։ Մուտքի մօտ կանգնած էր մի պահակ։ Վար իջանք ու միջանցքից անցնելով մըտանք մի գետնայարկ պատշգամբ, որի անկիւնում կախուած էր թիթեղեայ մի ճրագ։ Դէպի ձախ, մեր դիմաց բացւում էր մի դուռ, որից ներս մտաւ ժանդարմը ու, մի երկու վայրկեան յետոյ դուրս գալով, մեզ ներս տարաւ։

Միջին մեծութեամբ մի սենեակ էր. երկու դրասեղան, մի քանի աթոռներ, պատից կախուած ինչ որ մարդկանց պատկերներ եւ մէկ թաւշապատ երկար ու լայն բազկաթոռ, որ չէր յարմարւում մնացած կահաւորման։ Դէպի աջ, սենեակի խորքում, դրասեղաններից մէկի առջեւ, նստած էր կանացի դէմքով մի երիտասարդ պաշտօնեայ եւ ճրագի տակ դարձնում էր ինչ որ թղթեր։ Մեզ տեսնելով, նա մէկ կողմ հրեց թղթերը եւ այնպիսի դիրք ընդունեց, որ կարծես թէ օդի պակասութիւնից նեղւում էր։ Ապա թղթերը իրարու վրայ դարսելով, ելաւ ու մի պահ մտածեց։ Ուզում էր, երեւի, բան մտաբերել։ Այո, նա վարանքով մօտեցաւ դարակին, մի հաստ մատեան դուրս քաշեց եւ արհեստականօրէն բամբ ձայնով, հարցնելով մեր անունը, ազգանունը, բնակատեղին, պաշտօնը, ծննդավայրը, արձանագրեց։ Զարմանքով նայեց ինձ, երբ ասացի, թէ պարսկահպատակ եմ. մի քիչ մտածեց, բայց գրեց։ Աւարտելով գործը, մօտեցաւ ու փորձեց մեր թեւերը քակել։ Ապարդիւն, իր ձեռքերի գործը չէր այդ։ Երբ փորձերը անյաջողութեան մատնուեցին, սրտնեղեց։ Ապա աւելի ու աւելի ջղայնանալով, սկսեց կապողի հասցէին ամէն տեսակ հայհոյանքներ ուղղել։ Վերջապէս դրդուած՝ դուռը բացեց ու անհամբեր ձայն տուեց.

— Սաղը՛կ, Սաղը՛կ...

Ներս մտաւ փոքր ու սուր դէմքով, կարճահասակ մի մարդ, որ մեծ մկան նման էր։ Նա, մէջքից վեր դէս ու դէն ճօճւելով եւ ինձնից Գարեգինին ու նրանից ինձ անցնելով, սկսեց մեր կապերը քաշքշել։ Ոչ մէկ արդիւնք։ Առաջարկեց որ կկդենք եւ սկսեց Գարեգինի

թեւը վեր վար դարձնել։ Սակայն գործը «ջամբաղութեան» բնոյթ էր ստանում, առանց որեւէ հետեւանքի։

— Կտրի՛ր, գոչեց անհամբերութեամբ պաշտօնեան։

Բայց մկնաղէմը, ըստ երեւոյթին, խնայում էր պարանը։ Վերջապէս Գարեգինի թեւերը քակեց եւ դիւրութիւն ստացաւ նաեւ իմ կապերը թուլացնել ու արձակել։

— Տա՛ր, գոչեց պաշտօնեան։

Գետնին ընթեր հաւասար անկիւնաձեւ պատշգամբի միւս ծայրին կանգ առանք։ Մկնաղէմը, բանալիների տրցակի միջից մէկը զատելով, մի հաստ դուռ բացեց ու, ներս անելով մեզ, կողպեց։ Մի աննկարագրելի գարշահոտութիւն մէկէնիմէկ շշմեցրեց ինձ։ Մթութեան մէջ խարխափելով մէկ – երկու քայլ արի եւ յանկարծ ոտքս ինչ որ բանի հանդիպեց ու վայր ընկայ։ Գրեթէ միաժամանակ, դրսից, երկաթապատ պատուհանի եզրին մի ճրագ երեւաց։ Մկնաղէմը՝ սուր, թափանցող աչքերը կոպերի միջից դուրս նետած՝ վանդակի միւս կողմից շեչտակի նայում էր...

Կաւզայի բանտն էինք։ Բանտասենեակը ցեխի, կեղտի, գարշահոտութեան մէջ թաղուած փոքր ու ցած մի որջ էր։ Հողի յատակի մէկ անկիւնում կար կեղտից սեւացած մի սափոր, որ սովորաբար գործ են ածում նամաղի համար։ Ցատակը այդ մասում ցեխ էր։ Սենեակի մէջտեղը եւ պատի տակ ընկած էին խոտի պարկեր։ Վանդակապատ բաց պատուհանը, որի տակ նստել էի, երկու – երեք քայլի վրա նայում էր սեւացած, բարձրադիր տախտակապատի։ Որջի մէջ, դէս ու դէն ընկած խոտի պարկերը եւ գետնի մէկ մասի թարմ ցեխը մատնում էին, որ դեռ այսօր նրա մէջ մարդիկ են եղել։ Հազար ու մի ենթադրութիւնների մէջ էի, թէ ովքեր կորող էին լինել։ Եւ յիշում էի բոլոր նրանց, որոնց ոչ մի տեղ չպատահեցի՝ Երուանդ Խանէդանեանին, Հայկ Խրիմեանին, Տիգրան Քիւրքչեանին, Գեր Մելքոնին եւ ուրիշ շատերին...

Գարեգինը մօտս կանգնած նայում էր մերթ ինձ, մերթ որջի պատկերին։ Երեւի զգաց, որ անզօր եմ այլեւս «դրութիւն» ճշդելու։ Նա մէկ ձեռքով բռնած իր կապոցը, միւսով դարձնում էր խոտի պարկերը ու զննում։ Երկու հատ զատեց ու պատուհանի մօտ քաշելով, սկսեց կարգաւորել։ Վերջացնելով իր գործը, առաջարկեց, որ պառկեմ։ Մեր բախտի ճամբու վրա «աւադութեան» աստիճանը այժմ, կերեւի թէ, նրանն էր։ Քնե՞լ, այդ էր միակ ցանկութիւնս։ Բայց աչքս չէր թողնում։ Թմրութեան մէջ լսում էի, թէ ինչպէս Գարեգինը, պատուհանի մօտ կանգնած, մկնաղէմին չքմեղանքով բա-

ցատրում է, որ հիւանդ եմ եւ խնդրում է մաքուր ջուր բերել, որ աչքը լայ։ Մկնադէմը խնդիրը կատարեց։ Գարեգինը, փոքր անձեռոցիկներից մէկը թրջելով, զգուշութեամբ մաքրում էր բորբոքած աչքը եւ միւսով սրբում։ Վերջապէս աւարտեց գործը ու աջ կողմից տեղ բռնելով պառկեց եւ մնաց անշարժ։ Բաւական ժամանակ էր անցել, երբ նա մէջքով դարձաւ դէպի ինձ ու, կարծես թէ, քնեց։ Խոր, անթարթ գիշեր էր։ Մեզ շրջապատող դարշահոտութիւնը չէի զգում այլեւս։ Բայց օդը կանգնած էր եւ բնականոն շնչելու համար՝ անբաւարար։ Այնքա՜ն լուռ էր բանտը, որ կարծես թէ այդ խոշոր շէնքի մէջ վերէն – վար մարդ չկար։ Որքան ժամանակ էր անցել՝ չգիտեմ։ Յանկարծ թւաց ինձ, թէ թրթռուն սրնգի ձայն եմ լսում։ Այո... Քիչ չանցած նւագին զուգորդեց հնչուն ու դուրեկան երգի ձայն.

«Զեմա՜նընդա բէ՜նի օ՛լուր բիր գիւն, հէլբէթ արա՜բսան»...

Թրքական բանտում արգելափակուածի սրբազան իրաւունքն է օրւայ ու գիշերւայ ուղած ժամին երգել։ Եւ սկսին, կարծես թէ, երաշ էր։ Հայկի սիրած երգն էր այդ. «ուդ»ի լարերը բեկբեկելով, մեծ զգացմունքով էր երգում նա այդ երգը. այնտեղ, ընդարձակածաւալ պարտէզի այն մասում, ուր գետնին ամրացած էին կանանչներկ մի սեղան եւ երկու զուգահեռ նստարաններ։ Եւ երգում էր այնքա՜ն զգացած, որ յաղթանդամ Ասլանը հաճոյքից թափահարում էր շէրթան ու դունչը դնում թաթերին։ Մեծ հորթի չափ էր այս շունը եւ զարհուրանք էր ազդում բոլորին։ Հայկը նրան լիաթոք հպարտութեամբ ասում էր.— Ասլա՜ն...

Եւ բարեկամները Հային փողոցում պատահելով նրան՝ կատակով ասում էին. — «Ասլա՜ն».... Ցերեկը, շղթայակապ բակում նստած, նա հալածում էր ճանճերին։ Իսկ երբ մթնում էր, նրան տանում, կապում էին նստարանների մօտ, պարտէզում։ Ուշ գիշերին Ասլանը ազատութիւն էր ստանում։ Այն ժամանակ նա ցատկում էր պարտէզի բարձրադիր պատը, ու լուսնոտի պէս սեւեռաբիբ, քայլում էր բոլոր պատերի վրա։ Խանէդանեանը, որին մի անգամ ահաբեկել էր Ասլանը, վաղո՛ւց արդէն գիշերը եկեղեցու բակով չէր անցնում։ Իբր թէ, Ասլանը միշտ կանգնած է լինում պարտէզի վարի պատին եւ այնտեղից նայում է, երբ ինքը գնում է տուն։ Ու յիշում եմ, թէ ինչպէս մի օր, երբ Ասլանը, շղթան թափահարելով, փաղաքշորէն մօտեցաւ հոտոտելու Հայկի թեւը մտած Երուանդին, նա յանկարծական մի ցնցումով վեր հանեց ոտքը եւ գոյնը նետելով չընկաց.

— Շուն է, չի գիտցիր, կը նայիս, կը խածնի...

Անյայտ բանտարկեալը սրտապատառ երգում էր.
«Բէնի՛, բէնի՛ բի՞ր գիւն օ՞լուր, հէլբէթ, արա՞սան»...
Ո՞վ պիտի փնտռի այս իրարանցման մէջ քեզ, մա՛րդ...
Զարմանալի է, որ մինչեւ այդ մօրս բնաւ չէի յիշել...

Վերջին անգամ, Բաղէի բանտում, մեր Սիբիր մեկնելու առաւօտեան, որից մի քանի օր առաջ Խոռխոռունու մայրը գիշերը վրան նաւթ լեցնելով այրուեց ու ածխացաւ, մայրս, տեսակցութեան պահին, ինձ ասաց.

— Չկարծես թէ ես էլ Վասակի մօր պէս...

Ու ես սացի, թէ չեմ կարծում:

Իսկ երբ ես զարմացած նայում էի, թէ ինչու, տեսակցութեան պահը լրանալուն պէս, այնքա՞ն աճապարանքով հեռացաւ, նա յանկարծ յետ նայեց ու ձեռքը վեր հանելով ասաց.

— Չկարծես, հա՛...

Մկնադէմը պլպլացող աչքերով ճրագի մօտից նայում էր: Միւս աչքս էլ կիսով չափ գոցելով, արտեւանունքներիս միջից զննում եմ: Որքա՞ն նման է այս մարդը առասպելական մուկի: Մեզ լաւ նայելու համար, դունչը կցկտուր շարժումներով ցնցում է. — «Այո՛, այո՛, քնած ենք»... Զքացա՛ւ. կարծես, թէ զետինը մտաւ... Վստահ էի, որ պատուհանի եզրից նորից պէտք է դուրս հանի դունչը... Ու աչքս մնացել էր լոյսի լեզուակին դամւած... Մէկ կողմը վեր, միւսը վար ու մէջտեղը պարապ... Արբած կիսալուսին է կարծես... Սուլող օձի լեզու... Նաւթ չկայ, ճրագի մէջ նաւթ չկայ... Բայց յանկարծ լոյսը շտկւեց ու պլպլալով ճառագայթեց... Սիրտս ուժգին բաբախում էր... Ու մտածում եմ, առնեմ, վրաս թափեմ նաւթը, այրւեմ ու վերջանամ... Ու ողջ էութիւնս, բազմահազար լեզու առած, ամէն կողմից ասում է. «ա՛ռ, ա՛ռ, ա՛ռ... նաւթը վրադ թափիր, այրւիր ու վերջացիր»... Մէկ քայլ էր միայն ինձ բաժանում ճրագից. անշըշուկ ելայ... Աչքի չափից շատ պարզ էր, որ ճրագը մի քիչ թեքելով կարելի է պատուհանի վանդակից ներս առնել... Ու, յանկարծ.

— Ի՞նչ կա... ա՛...

Ձեռքս մնաց ճրագին... Գարեգինը թեւս բռնած հազիւ հազ շշընջաց.

— Ի՞նչ կընես...

Հարցումը ինձ այնպիսի՛ շփոթութեան մատնեց, որ ինչ ասելս չիմանալով, մեքենաբար շշնջացի.

Ես ուզում եմ առնել, նաւթը վրաս թափել, այրւել ու վերջանալ...

digitised by

Գարեգինի շրթունքները դողացին ու դէմքին ձեւաւորուեց յանցաւոր մանկան մի ժպիտ.

— Դո՜ւ... ատանկ կըսես, որպէսզի փորձես, թէ որքան ես դիմացկուն եմ, չէ՞...

Կարծես թէ պաղ ջուր մաղեցին գլխիս...

Լուսաբացին տաքութիւնս մեղմացաւ: Տախտակապատի միւս կողմից լսւում էին ձայներ: Ըստ երեւոյթին բանտի բակն էր: Դուրսը արդէն արեւ կար, երբ Մկնաղէմը դուրս հանեց եւ մեզ: Միջանցքից անցնելով, մտանք դրասենեակի փոքրիկ բակը, որից դէպի ներս մի դուռ տանում էր բանտի բակը: Մուտքի դէմ եւ ձախ կողմից բարձրանում էր վանդակապատ պատուհաններով երկյարկանի շէնքը: Աջ կողմից երկարում էր բարձր ու հաստ պատ, որից մէկ – երկու քայլ դէպի ներս աղբիւր կար: Ջրի մօտ ընկած էին ծալծլւած ամաններ ու մի դոյլ: Անտես առնելով աչքիս կծկծոցը, գլուխս օճառով լւացի եւ քաշւեցինք մէկ կողմ, մուտքի մօտ: Նոր նկատեցի, որ՝ հակառակ բանտի մեծութեան՝ բակում դրեթէ մարդ չկար: Պատի տակ, մեր դիմաց, մի թուրք կկղած բռի մէջ հացի միջուկ էր տրորում: Քովնտի նստած մի գիրուկ թուրք, որի շրթունքները, կարծես թէ, խածել էր մեղուն, կենտրոնացած, համրիչ էր դարձնում: Քիչ վերը կիսամերկ մի ուրիշը, դէմքը ծամածռելով, շապիկի մէջ միջատ էր որոնում: Բակի խորքում, շէնքի դիմաց բարձրացող միակ ծառի տակ նստած էր մի խումբ, որ մերթ ընդ մերթ աղմկում, լռում էր. երեւի խաղում էին: Շէնքի ձախ կողմի պատուհաններից երբեմն լսւում էին բացականչութիւններ, որոնք, երեւի ուղղւած էին մեզ: Հազիւ մի քանի վայրկեան էր անցել, երբ ծառի տակ բանտարկեալները շատացան եւ նստածների հետ միասին եկան դէպի մեզ: Թիկնեղ մէկը, որ առաջնորդում էր բոլորին, հարց տւեց.

— Ովքե՞ր էք:

— Բանտարկեալներ, խուսափուկ պատասխան տւի ես:

Հարեւանին նայեց եւ ծաղրածու մի ձեւով աչքը թարթեց:

— Ե՞րբ եկաք:

— Գիշերը:

— Ո՞րտեղից:

— Էլէւիից:

— Ի՞նչ միլլէթ էք:

— Հայեր ենք...

— Փա՛հ... աշխարհում դեռ հայ կա՞յ:

Նայում եմ դէմքին եւ զգում եմ, որ ընդհարումը անխուսափելի է... Բայց յանկարծ նրա ծաղրածու դէմքը մեղմ ու խնդրական արտայայտութիւն է ստանում.

— Փարա վա՞ր...

Ես մօտեցայ մուտքին եւ կանչելով Մկնադէմին խնդրեցի, որ մեզ յետ տանի բանտասենեակը: Բակից դուրս գալուն պէս չօշափեցի գոտուս կարը. դրամները, որոնց մասին մինչեւ այդ մոռացել էի, այնտեղ էին: Ներսը դողում էի եւ միաժամանակ սկսում էր տաքութիւնս: Կատարեա՛լ դժբախտութիւն. մեռնելուց աւելի՛ քիչ էի վախենում, քան հիւանդ լինելուց: Ինչ վիճակի մէջ էր Գարեգինը՝ չեմ յիշում, բայց գրեթէ միշտ զբաղած էր ինձմով: Իսկ այդ ինձ, նամանաւանդ գիշերուայ դէպքից յետոյ, աւելի էր ընկճում: Նա շարունակ ասում էր, որ պէտք է մի բան ուտեմ, կազդուրւեմ, բայց ես ոչ ախորժակ ունէի, եւ ոչ էլ նա ուզում էր տալ կապոցի մէջ մնացած հացն ու ապուխտը.

— Հէչ մանր դրամ չմնա՞ց քովդ...

— Չմնաց:

— Պէտք է դուրսէն մածուն բերել տալ, բայց ես ալ մէկ փարա չունեմ, ամէն բան Ռեբեկային քով մնաց...

Ու լռեց: Նորից կնոջից բաժանուելու խնդիրը, որ ինձ չարչարում էր, ցցւեց մտքիս մէջ: Մտածեցի, որ պէտք է Գարեգինի մօտ դրամ թողնել եւ սկսեցի քանդել կարը: Բայց հաղիւ աւարտեցի եւ դուրս քաշեցի զատ կարուած երկու թղթադրամները, երբ յանկարծ դուռը շրխկոցով բացւեց ու ներս մտաւ Մկնադէմը: Դժւարութեամբ արտասանելով Գարեգինի անունն ու աղդանունը, ասաց, որ կանչում են դրասենեակ: Գարեգինը ելաւ, բայց վարանքի մէջ էր. թւաց, թէ ուզում է բան ասել, բայց յանկարծ առաւ ֆէսը ու դուրս գնաց: Այնքան արագ կատարւեց այդ, որ չկարողացայ անմիջապէս ինձ հաշիւ տալ և միայն դուռը փակելու վրա հասկացայ, որ գնաց: Դողը ինձ տիրեց ու զանազան ենթադրութիւնների մէջ ընկայ: Իսկ երբ տեսայ բռիս մէջ ճմլուած թղթադրամները, բոլորովին շփոթւեցի.

— Սաղը՛կ էֆենդի, Սաղը՛կ էֆենտի՛...

Մկնադէմը միջանցքի միւս ծայրից արագ մօտեցաւ պատուհանին.

— Ի՞նչ կայ...

— Սաղրկ էֆենդի··· քեզ մէկ մէջիդ կը տամ, եթէ ասես, թէ ի՛նչ եղաւ ընկերս···

— Այնտեղ է, էֆենդի, միւտիրի մօտ։

— Ինչո՞ւ կանչեցին···

— Ալլահը վկայ, չգիտեմ։

— Սաղրկ էֆենդի, քեզ երկու մէջիդ կը տամ···

— Ալլա՜հը քեզ թող օգնի··

— Բայց պէտք է ընկերոջս հետ տեսնուեմ։

— Հիմա կը գայ, էֆենդի։

— Իսկ եթէ՞ ուրիշ բանտասենեակ տանեն···

— Տանողը ես չե՞մ, ուր էլ ասեն տար, առաջ այստեղ կը բերեմ։

— Մարդու խօ՞սք···

— Հէ՛յ հոգ մի անի։

Քիչ հանդարտուեցի, բայց շատ երկար թաց ինձ Գարեգինի բացակայութիւնը եւ արդէն կասկածում էի թէ յետ կգայ, երբ մի-ջանցքից ոտնաձայներ լսեցի։ Ներանք էին եւ ուղղակի մօտեցան պատուհանին։ Գարեգինը յուզած, չփոթուած, բայց եւ ինչ որ մի այլ վիճակի մէջ էր։

— Արձակեցին, քիչ ետքը պիտի մեկնիմ··· Կըսեն, թէ հոս սամսոնցիներու խումբ մը կայ, որ շուտով պիտի ճամբեն··· Ցոյս ունեմ վաղը կամ միւս օրը Ռեբեկային հասնելու···

Մի անխառն ուրախութիւն մէկէնիմէկ համակեց ինձ եւ մինչեւ այդ ապրած դառնութիւնները երազի պէս չքացան։ Բայց յանկարծ մէջս կասկած ծագեց։

— Այդ ամէնն իրա՞ւ է···

— Այո՛, իրաւ է, — արթնութեամբ ասաց Գարեգինը, — պաշտօնեան շատ մեղմ ու քաղաքավարի բացատրեց, որ իմ ձերբակալութիւնը թիւրիմացութիւն է եւ աղատ եմ ամենուն պէս դաղթելու։

— Փա՜ռք Աստուծոյ, ձեռքդ տո՛ւր։

Ու բռի մէջ դրի ճմլուած երկու թղթադրամները։ Գարեգինի աչքերը ջրակալեցին, բայց իրեն հաւաքեց եւ ասաց·

— Լսի՛ր, մինչեւ Ռեբեկային հասնիլս՝ ինձ մէկ մէջիդ լիուլի կը բաւէ։

— Խենթ ես, ինչ ես, չէ՞ որ ես դեռ երեք ոսկի ունեմ։

— Այո, բայց ինչ գիտնամ, թէ մինչեւ ե՞րբ պիտի մնաս հոս···

— Վստահ եմ, որ ինձ էլ շուտով կ'արձակեն ու կը հասնեմ ձեզ։

— Խօսք տուր, որ ամէն կերպ քեզ պիտի խնայես···

— Պատուոյ խօսք։

Մկնադէմը վար նայելով չչնջաց.

— Զափո՛ւկ, չափո՛ւկ, եթա՞ր...

— Հիմա, եթէ կուզես, որ հանդիստ սրտով մեկնիմ, պէտք է, որ մէկ թուղթը յետ առնես...

Ըստ էութեան, կարծես թէ, նոր հասկացայ, որ բաժանուում ենք.

— Շատ լաւ...

Գարեգինը, վանդակից դուրս ընկած, ձեռքս համբուրում էր ու անձայն հեկեկում...

Ոտնաձայնը միջանցքում վաղուց էր մարել, իսկ ես դեռ կանգնած էի պատուհանի մօտ, չփոթ մի վիճակի մէջ եւ չգիտէի, թէ եղածը լա՞ւ էր, թէ վատ: Բայց եւ այնպէս մի անբացատրելի ուրախութիւն համակել էր ինձ: Մի պահ մինչեւ անգամ պատկերացաւ ինձ, թէ ինչպէս Գարեգինը հասնում է Ռեբեկային եւ միւսներին... Բայց, երբ յետ դարձայ եւ Գարեգինի պարկի վրա տեսայ նրա կապոցը, չփոթութիւնս սաստկացաւ...

Քիչ – քիչ սկսում էի հասկանալ, որ Գարեգինը մահւան ճամբու մէջ մտաւ: Մնում էր պարզել այն հարցը, թէ երբ տեղի կունենայ այդ՝ նախ քան Ռեբեկային հասնե՞լը, թէ յետոյ: Եւ ամենից կարեւորն էլ, կարծես թէ, այս էր: Ծանր, շրջահայեաց եւ զգոյշ, թւում էր թէ ես գնում եմ Գարեգինի հետ դէպի Էլէւի... Ու դեռ աւերակներին չհասած, ամէն բան հասկացայ...

— Է՛հ, կարող եմ ասել, որ աւելի քան հասկացայ: Զգիտեմ միայն՝ վստա՞հ էր արդեօք «Ռեբեկային հասնելու», թէ մի խօսք էր, որ ասաց ինձ սրտապնդելու համար...

Ու, կարծես թէ, Ստկին պաշտօնատան մէջ ինձ հարցաքննում է.

— « Պատմի՛ր տեսնեմ, թէ ի՛նչ որոշեցիք Էրզրումում», ասում է նա մտրակը ճոճելով:

— « Էրզրումո՞ւմ », ասում եմ ես, «այդ անցա՛ծ բան է»...

— « Անցա՞ծ », գոչում է նա:

Ու երբ ես դրականապէս թօթւում եմ գլուխս, նա բռունցքը ի-ջեցնում է բերանիս ու ես, վար ընկնելուց խուսափելով, նստում եմ: Լեզուս բերանիս մէջ շարժելով հասկանում եմ, որ առջեւի ատամներս փշրուեցին: Հաւաքելով փշուրները, թափում եմ ափիս մէջ. արիւն է, մուգ թանձր արիւն:

Այն ժամանակ Ստկին կատաղութեամբ ճօճում է մտրակը ու գոչում.

— « Քեզ, չան պէս ծեծելով, կը սատկեցնեմ, եթէ չասես, թէ ինչ արիր զէնքերը » :

— « Զէնքե՞ր, չինծու զարմանքով ասում եմ ես...

— « Այո՛, զէնքերը », գոչում է Ստկին, ձեռքերը գրպանում մօտենալով ինձ :

— « Ի՞նչ զէնքեր » ...

— « Այն զէնքերը, որ ստացաւ Ֆիրանեանը «Փակէ»-ի ընկերութեան միջոցով » :

— « Ինչի՞ տեղ էք դնում դուք ինձ », ասում եմ ես վշտացած...

— « Դու ի՞նչ ես, որ ինչի տեղ դնեմ քեզ, ասա՛, ի՞նչ արիր զէնքերը », գոչում է Ստկին՝ գրպանից դուրս քաշելով ատրճանակը :

— « Զգիտեմ » ...

Այս խօսքիս վրա Ստկին բոլոր ուժով ատրճանակի կոթը իջեցնում է գլխիս եւ արիւնը առատութեամբ հոսելով, թափւում է աչքերս :

Ստկին կկղած հեւիհեւ նայում է ու ատամների միջից չչնջում.

« Քեզ ծեծի տակ Համբարի պէս կսպանեմ, եթէ չասես, թէ ինչ արիր զէնքերը » ...

— « Համբարի պէ՞ս » ...

— « Այո՛, այո՛, ճիշդ ու ճիշդ Թոփալ Համբարի պէս... Ահա՛ քեզ » : Ու ատրճանակի կոթով հարւածում է կողերս :

— « Սպասեցէք » ...

— « Հը՞, ասա՛ » ...

— « Սպասեցէք մտածեմ » ...

— « Ա՛, ուրեմն գիտե՞ս, իրերդ հաւաքիր ու վար իջիր, վախկոտ չուն, այնտեղ ամէն բան կը պարզւի», ասում է Ստկին, գոռոզութեամբ ելնելով :

Ցանկարծ սիրտս ճմլւում է եւ ուզում եմ լաց լինել, բայց զարմանքով տեսնում եմ, որ Ստկիի տեղը կանգնած է Թոփալ Համբարը.

— « Աս ի՛նչ խնդալիք բան է, տնաչէ՛ն », ասում է նա, ձեռնափայտին յենած հաստ ու ծուռ ոտքը շակելով : Յետոյ մի լաւ դիտելով, թէ ես ինչպէս եմ լալիս, յանկարծ, խնդալու պէս պոռթկալով, երեք անգամ խորունկ, ցամաք ընդլնդում է — « հա՛, հա՛, հա՛ » ու գլուխն օրօրելով, ժպտալով, մեղմօրէն յարում է.

— « Մո՛ւխդ չմարի, մո՛ւխդ չմարի » ...

(Շարունակելի)

Բելգրադ